

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ

Մեր կարգախոսն է՝ արդյունավետ և հուսալի մեթոդներով բավարարել պատվիրատուների սպասելիքները՝ նրանց համար մատչելի գներով: Մեր առաքելությունն է՝ մատուցել որակյալ ծառայություններ : Հիմնական արժեքներն են՝ պատվիրատուներին իբրև գործընկերներ դիտելը և նրանց հետ փոխհարաբերությունները երկարատև ու կայուն հիմունքներով կառուցելը: Մեր նպատակն է՝ մատուցվող ծառայությունների ՈՐԱԿԻ ԱՆԸՆԴՀԱՏ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ: Սերտիֆիկացման մարմնի հաջողության գրավականներն են՝ աշխատակիցների պրոֆեսիոնալիզմը, նախաձեռնությունը, անկողմնակալությունն և լավատեսությունը:

Նշված դրույթների հետևողական կենսագործումը հնարավորություն է տալիս ապահովել պատվիրատուների բավարարվածության պատշաճ մակարդակը:

*(Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ
ՈԿՀ ՍՍ Որակի քաղաքականությունից)*

Հասցեն, ք. Երևան, Կոմիտասի 49/2, 4-րդ հարկ
E-mail: sarm@sarm.am, SPapyan@sarm.am
Հեռ. 23-45-97 Ֆաքս: 28-56-20

Մեր մասին

Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը Ստանդարտացման միջազգային կազմակերպությունում (ԻՍՕ) և դրա լիիրավ անդամ է:

Ստանդարտների ազգային ինստիտուտը հավատարմագրված է որպես որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին՝ իրականացնելու հանրապետության կազմակերպություններում որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ ԻՍՕ 9001-2000 «Որակի կառավարման համակարգեր. Ընդհանուր պահանջներ» միջազգային ստանդարտին համապատասխան:

Սերտիֆիկացման մարմնի աշխատակիցներն որակավորված են որպես որակի կառավարման համակարգերի աուդիտորներ, որոնք ունեն մեծ գործնական փորձ խորհրդատվության և սերտիֆիկացման աշխատանքներում և անալիտիկ մտածողության բարձր մակարդակ:

Սերտիֆիկացման մարմնի աշխատակիցները ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտներին համապատասխան ստեղծել են որակի կառավարման համակարգերի մշակման և ներդրման ինքնատիպ մեթոդներ:

Խորհրդատուների աշխատանքը սկսվում է գոյություն ունեցող որակի կառավարման համակարգերի վերլուծությունից և նրանց գործունեության «թույլ կողմերի» բացահայտումից, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը և քննարկումները հիմք են հանդիսանում որակի կառավարման համակարգերի կատարելագործման համար:

Յուրաքանչյուր աշխատակից կատարելագործվում է անհատական և ուսուցման ներֆիրմային ծրագրով: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս արագ և արդյունավետ կերպով լուծել մեր սպառողների մոտ առաջացող խնդիրները:

Մեր ընկերությունը օգնում է կազմակերպություններին միջազգային ստանդարտ-ներին համապատասխան որակի կառավարման համակարգի մշակման, ներդրման և սերտիֆիկացման գործընթացներում՝ ուսուցման, խորհրդատվության, աուդիտի, ռեյտինգային համակարգերի, հետազոտությունների և մշակումների միջոցով:

Մեր կողմից առաջարկվող որակի կառավարման համակարգի մշակման, ներդրման և սերտիֆիկացման գործընթացի առանձնահատկությունը այն է, որ գործընթացը հիմնվում է հանրության կողմից ընդունված և զարգացած երկրներում ճանաչված որակի կառավարման համակարգերի մոդելի վրա՝ պլանավորում--իրականացում--ստուգում--գործողություն: Յուրաքանչյուր փուլի իրագործումից առաջ մեր խորհրդատուների կողմից նախատեսված է անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում: Ընդ որում մենք պատրաստ ենք համագործակցել ցանկացած փուլում, սկսած աշխատակազմի ուսուցման գործընթացից և վերջացրած կազմակերպության սերտիֆիկացում: Մենք առաջարկում ենք հետևյալ սխեման.

Ուսուցում;

Խորհրդատվություն;

Նախասերտիֆիկացման աուդիտ;

Սերտիֆիկացման կազմակերպում;

Սերտիֆիկացում:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտները

ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտները իրենցից ներկայացնում են որակի միջազգային փաստաթղթերի հիմնարար համալիր, որը ներառում է կիրառման բազմաթիվ բնագավառներ:

ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտները սահմանում են պահանջներ որակի համակարգի նկատմամբ, որը ապահովում է կոնկրետ արտադրանքի մրցունակությունը և որակը: Բայց ամենից կարևորն այն է, որ ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտները արտացոլում են որակի բնագավառում համաշխարհային փորձը և դիտարկում են որակի ապահովման վերաբերյալ հարցերի լայն շրջան՝ մարքեթինգից մինչև արտադրանքի ուսիլիզացիա:



Ի՞նչ է ԻՍՕ-ն

Ստանդարտացման միջազգային կազմակերպությունն՝ ԻՍՕ-ն, պաշտոնապես գրանցվել է 1947 թվականին: ԻՍՕ-ի նպատակն է միջազգային ստանդարտացման և զարգացման միջոցով նպաստել պետությունների միջև ապրանքների և ծառայությունների փոխանակման ապահովմանը, ինչպես նաև տնտեսական և գիտատեխնիկական բնագավառներում համագործակցության զարգացմանը:

Ինչպիսի՞ առավելություններ է տալիս կազմակերպությանը մեզ հետ համագործակցությունը:

Մեզ մոտ աշխատում են մասնագետներ, որոնք անցել են հատուկ կուրսեր (ուսուցման ծրագրեր) ճանաչված կազմակերպություններում, ունեն համապատասխան որակավորում և աշխատանքի գործնական փորձ:

Գտնվելով և աշխատելով Հայաստանում, մենք օգտագործում ենք խորհրդատվական ծառայությունների մատուցման համաշխարհային փորձը:

Մենք խոսում ենք Ձեզ հետ նույն լեզվով, գիտենք Հայաստանի առանձնահատկությունները և երաշխավորում ենք մատուցվող ծառայությունների բարձր որակը:

Ձեր կազմակերպության որակի կառավարման համակարգի սերտիֆիկացումը միջազգային ստանդարտներին համապատասխան իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված որակի կառավարման համակարգերի միակ սերտիֆիկացման մարմինը, որը ԻՍՕ-ի լիիրավ անդամ է և ամենակարևորը՝ հանրապետության գործարարների ամենափորձված և վստահելի գործընկերը:

Մեր կողմից տրված սերտիֆիկատները ընդունվում և գնահատվում են արտերկրում և թույլ կտան Ձեզ դուրս գալ միջազգային շուկա:

Սերտիֆիկացված որակի կառավարման համակարգը անհրաժեշտ է կազմակերպությանը իրացման շուկայում սպառողների մոտ արտադրանքի որակի և հուսալիության նկատմամբ վստահության ստեղծման համար: Սակայն, առաջադրված

նպատակը իրականացնելիս, կազմակերպության ղեկավարը պետք է պատկերացնի, թե աշխատանքից ինչպիսի բացահայտ առավելություններ և օգուտներ կարող է ստանալ: Օրինակ.

կազմակերպության աշխատանքի բարելավում՝ ի հաշիվ որակի կառավարման համակարգերի կատարելագործման, արտադրությունում կարգուկանոնի հաստատման, պատասխանատվությունների բաշխման և ամրագրման գործում գործառույթների լրամշակման և աշխատանքի նկատմամբ կատարողների վերաբերմունքի բարելավման,

կազմակերպության աշխատակիցների համագործակցության նշանակալիորեն բարելավելում, ստորաբաժանումների աշխատանքի կարգավորում՝ համակարգի փաստաթղթերում գրառելով կազմակերպության գործունեության բոլոր տեսակի գործառույթները,

ղեկավարության և միջին անձնակազմի պատասխանատվության բարձրացում, աշխատանքային և տեխնոլոգիական կարգապահության բարելավում, արտադրության արդյունավետության բարձրացում,

սպառողի հետ արդյունավետ կապի ապահովում,

նոր արտադրատեսակների մշակման և իրացման ժամանակահատվածի կրճատում՝ բարելավելով սպառողի անընդհատ փոփոխվող պահանջմունքները,

մատակարարների հետ փոխշահավետ հարաբերությունների ստեղծում, այսինքն կազմակերպությունը պետք է գնահատի և ընտրի մատակարարներին՝ կազմակերպության պահանջներին համապատասխան արտադրանք մատակարարելու նրանց ունակության հիման վրա,

կազմակերպության կամ արտադրանքի մրցունակության բարձրացում և արտահանման հնարավորությունների մեծացում,

առավելություններ՝ տեղերներին կամ այլ նախագծերին/ծրագրերին մասնակցելու դեպքում,

գործընկերների հետ միջազգային մակարդակներում «նույն լեզվով խոսելու» հնարավորություն,

կազմակերպության վարկանիշի բարձրացում և ֆիրմային ապրանքանիշի նկատմամբ վստահության ամրապնդում և, որպես կանոն, պատվերների աճ, իրացման ծավալների ավելացում և այլն,

սպառողներից բողոքների և գանգատների քանակի նվազում, արտադրության վրա ծախսերի իջեցում և արտադրության տնտեսական ցուցանիշների լավացում:

Որակի կառավարման համակարգերի փաստաթղթերն են՝ որակի քաղաքականություն, որակի ձեռնարկ, ԻՍՕ 9001-2000 ստանդարտով պահանջվող փաստաթղթավորված ընթացակարգեր՝ անհամապատասխան արտադրանքի վերահսկման, ուղղիչ/կանխարգելիչ գործողությունների, գրառումների վերահսկման, ուսուցման, սպառողների պահանջմունքների և սպասելիքների բավարարվածության, չափումների և ընթացաստուգման, ներքին աուդիտի, ինչպես նաև տեխնիկական ռեգլամենտներ, աշխատանքային հրահանգներ՝ անվտանգության տեխնիկայի կանոնների և մեթոդական ցուցումների կիրառման վերաբերյալ և այլն:

*** Այսօր Հայաստանի Հանրապետության տնտեսության համբավն այնպիսին է, որ կայուն որակ ապահովելու կազմակերպությունների ունակությունը, անընդհատ կարիք ունի հավաստման, որը և հանդիսանում է ԻՍՕ 9001-2000 միջազգային ստանդարտի պահանջները հավաստող համապատասխանության սերտիֆիկատը: